

ՖՐԻԿԻ «ԳԱՆԳԱՏ»Ը

ՀԵՆՐԻԿ ԲԱԽԶԻՆԵԱՆ
helinemuradyan@rambler.ru

ԺԳ. դարում հայ իրականության մէջ աշխարհիկ կեանքի բուռն ծաւալման շնորհիւ բացուել է մի նոր դարաշրջան հայ քերթութեան պատմութեան մէջ: Այստեղ երբեւէ բացարձակօրէն իշխող **աստուածերգութեանը** զուգակցուել է **մարդերգութիւնը**, ինչը որոշ չափով սկսել էր երեւան գալ արդէն շուրջ երեք դար առաջ՝ Գրիգոր Նարեկացու (946/949-1003/1004) ստեղծագործութեան մէջ:

Միջնադարեան հայ բանաստեղծութեան այս նոր շրջանը սկզբնաւորել է Յովհաննէս Պլուզ Երզնկացին (1220/1230-1293), մի մեծ աստուածասէր եւ աստուածերգու, որը, սակայն, առաջինն արծարծելով հոգու եւ մարմնի հակամարտութիւնը՝ առաջ է քաշել նաեւ մարմնի՝ երկրայինի՝ իրաւունքը: Յովհաննէս Պլուզին անմիջապէս յաջորդել եւ հետեւել է Ֆրիկը (1230?-1310?)՝ եւս մի մեծ աստուածասէր եւ աստուածերգու, որը, սակայն, յանդգնել է անգամ ընդվզել Աստծոյ դէմ, ըստ այդմ, հայ եւ համաշխարհային գրականութեան մէջ հանդէս գալով որպէս առաջին աստուածամարտ բանաստեղծը:

Դեռեւս իր «Զարմանք մի մեծ» սկսուածքով կրօնական բանքում Ֆրիկն արտայայտել է այն գաղափարը, թէ Աստծոյ կողմից նախասահմանուած են եղել թէ՛ առաջին մարդու մեղսագործութիւնը եւ թէ՛ մեղաւոր մարդկութեան համար Աստուածորդու մարդեղացումը: Ուստի եւ Ադամը, որպէս իր գործած մեղքի արդարացում, հետեւեալ յանդուգն խօսքերով է դիմում Աստուածորդուն.

*«Ա՛յ իմ դեղ ու ճար,
Զպըրտողըն ես դեռ չ'ի կերել,
զինչ առաջ Դու Հօր խոստացար.
Դու է՛ր անկար ի կարիք
'ի ի Կուսէն մարմին ըզգեցար.
Երեսուն 'ի երեք տարի
ի յաշխարհս եկիր Դու կեցար.
Կարող էիր Դու փըրկել
զմեղուցեալքս ի յերկնից ի վայր:
Թէ չէր պարճառն ի Քէնէ՝
է՛ր եկիր ի վայր, խաչեցար»*՝:

Փաստօրէն Ադամը՝ մարդը, Աստծուն է մեղադրում իր մեղանշման համար, քանի որ այդպէս էր Տէրը նախասահմանել եւ գիտէր, որ մարդն իբրեւ տկար արարած չի կարողանայ պահել իր պատուիրանը: Ուստի եւ, մեղաւոր մարդկանց երկնքից «ի վայր» փրկելու փոխարէն, Աստուած զուր տեղը ստիպուած է եղել իջնել երկիր եւ խաչուել: Աստծուն ուղղուած այդ մեղադրանքը Ադամի շուրթերով ասում է ինքը՝ Ֆրիկը: Հետեւաբար յաջորդ տողերում նա սաստում է ինքն իրեն եւ մեղայ գալով՝ ասում.

*Չայդ ո՞նց կարես դու ասել
ընդ Աստուած, Ֆրիկ՛կ դու յիմար,
Յառաջ գիտացի՛ր ըզքեզ՝
յոչընչէ դու ո՞նց գոյացար,
Երբ չես գիտելոյ կարող,
հանց վըստահ դու է՛ր խօսեցար,
Անկի՛ր ի յերես ՚ի ի ոտք,
Ասա՛. «Տէ՛ր, մեղայ Քեզ հազար...»*

Այստեղ արտայայտուած է այն գաղափարը, թէ քանի դեռ մարդը չի հասել գիտակցութեան այն մակարդակին, թէ ինչպէս է ինքն արարուել, իրաւունք չունի վիճարկել Աստծոյ արարչագործութիւնն ու ընդդիմանալ նրան: Սա եւս ինքնին նոր ու համարձակ գաղափար էր միջնադարեան հայ մտքի ասպարէզում:

Այսպիսով, կրօնական այդ բանքում արդէն աստուածերգութեանը զուգակցուած է աստուածամարտութիւնը:

Նշենք նաեւ, որ «Երբ քեզ դրախտն էր պատրաստած» սկսուածքով բանքում եւս ֆրիկեան ըմբոստ Ադամը դարձեալ մեղադրում է Աստծուն, քանի որ վերջինս է ստեղծել իրեն մեղսագործութեան մղած Եային՝ կնոջը...

Ֆրիկի ընդվզող ոգին առաւելապէս արտայայտուել է նրա **գանգատական բանքերում**, որոնց մէջ բանաստեղծը բացորոշ նշաւակել է աշխարհում իշխող անարդարութիւնը: Յատկապէս իր նշանաւոր «Ընդդէմ Ֆալաքին» բանքում նա այդ անարդարութեան համար ծաղկել է աշխարհը տնօրինող Ֆալաք-Ճակատագրին՝ համարելով նրան «ծուռ դատաւոր»: Նոյն այդ բանքում Ֆրիկն անուղղակիօրէն մեղադրել է Աստծուն, քանի որ վերջինս է Ֆալաք-Ճակատագրին՝ ուղղորդողը («դու՛ պատճառ, Աստուած՝ Դատաւոր»): Ըստ Վալերի Բրիւսովի, «ազար քննադատութեան

*ոգին առաջին անգամ է բոցավառում հայ ազգաբնակիչ
բանաստեղծի այս տողերի մէջ»²:*

Ֆրիկի այդ «ազատ քննադատութեան» կամ աստուածամարտական ոգին ամէնից ակնյայտ խորութեամբ ու սրութեամբ արտայայտուել է նրա բանաստեղծական գլուխգործոցը հանդիսացող «Աստուած արդար եւ յիրաւի» սկսուածքով բանքում, որ յայտնի է «Գանգատ» խորագրով:

«Գանգատ»ը հասել է մեզ երեք տարբերակով: Առաջինը Ֆրիկի անունով է եւ խորագրուած է «Բան Ի Ֆրիկ Գրքոյն»³: Երկրորդը ոմն Բարսեղի անունով է եւ խորագրուած է «Բարսղի Ումեմն Մարդոյ Կոիւ Եղեալ Ընդ Աստուծոյ, Կու Մեղադրէ Եւ Յետոյ...[Մեղ]այ Աստուծոյ»⁴: Երրորդը ոմն Սարկաւագ Վարդապետի անունով է եւ խորագրուած է «Սարկաւագ Վարդապետի Ասացեալ Մարտ Ընդ Աստուծոյ»⁵: Կան նաեւ այս տարբերակների ընդօրինակութիւններ՝ առանց հեղինակի անուան յիշատակութեան:

Ինչպէս համոզիչ կերպով ապացուցել է պատմաբան Հայկազ Ժամկոչեանը, բանքի հեղինակը Ֆրիկն է, իսկ Բարսեղը եւ Սարկաւագ Վարդապետը՝ դրա յետագայ վերամշակողներ⁶:

Ֆրիկագէտ Տիրայր վարդապետը (յետագայում՝ արքեպիսկոպոս) Ֆրիկի եւ Բարսեղի անունով յայտնի օրինակների հիման վրայ կազմել է բանքի քննական բնագիրը եւ եզրակացրել, որ հեղինակը Բարսեղն է: Ուստի եւ նա բանքը զետեղել է իր կազմած ժողովածուի յաւելումում⁷:

Ֆրիկի երկերի 1941ի հրատարակութեան կազմողներն, իրաւամբ, բանքի հեղինակ են համարել Ֆրիկին եւ հրատարակել նրա անունով յայտնի բնագիրը⁸, իսկ Բարսեղի եւ Սարկաւագ Վարդապետի վերամշակումների բնագրերը զետեղել են հատորի «Փոփոխականներ» բաժնում⁹:

Ինչպէս ապացուցուած է, «Գանգատ»ը գրուած է 1295ին, յիշեալ «Ընդդէմ Ֆալաքին» բանքից շուրջ տաս տարի անց¹⁰: Այդ տասնամեակի ընթացքում շատ ակնյայտ արմատական էր դարձել ըմբոստ բանաստեղծի դժգոհութիւնն Աստծոյ ստեղծած աշխարհի անարդար կարգուսարքի դէմ: Եւ իր գանգատ-բողոքը նա լաւագոյնս արտայայտել է իր խնդրոյ առարկայ բանքում: Այստեղ արդէն բանաստեղծը դիմում է ոչ թէ ֆալաք-ճակատագրին, այլ ուղղակիօրէն Աստծուն՝ գերագոյն դատաւորին՝ ասելով.

Աստուած արդար եւ յիրաւի

*Եւ ողորմած յամենայնի.
Հանդէս ունիմ, բան ի վիճի,
Թէ Դու լըսես Քո ծառայի:*

Ինչպէս նկատել է Մանուկ Աբեղեանը, դեռեւս աստուածաշնչեան Յոբն է գանգատուել Աստծուց եւ արդար դատաստան խնդրել իր մարմնական տառապանքների համար: Հզօր Աստծոյ դէմ «խառնեալ աղերսի» դատ է բացել նաեւ Գրիգոր Նարեկացին¹¹: «Նարեկացու «դատ դնելը» նոյնն է, ինչ Ֆրիկի «հանդէս» եւ «բան ի վիճի»... եւ որքա՞ն տարբերութիւն այս երկու «դատի» եղանակի, նիւթի եւ նպատակի միջեւ: Մէկն աղերսախառն խոնարհութեամբ է դիմում «ահաւոր դատաստան» անող «Հզօր»ին, միւսը դժգոհութեամբ ու համարձակ հարցապնդում է ուղղում նոյն «ահեղ, ահաւոր», «Ամէնազօր»ին իր արած դատաստանի համար: Մէկի դատի «խօսքն ընդ Աստուծոյ» վերաբերում է իր եւ իրեն նման կրօնաւորների անձնական հոգեւոր, այսինքն՝ կրօնական կեանքին եւ իր «կորած հոգու» փրկութեանը, որ լինելու է անդէնի աշխարհում – երկնքում: Իսկ միւսի «դատ ու վէճի բանի» նիւթն է ընդհանրութեան, ժողովրդի իրական դժբախտ կեանքն այս աշխարհում եւ նրա մարմնաւոր փրկութիւնը «տառապանքից»¹²:

Բանքի սկզբում Աստուած-Դատաւորին տրուած արդար եւ յիրաւի իրաւացի որակումները յաջորդ տների թելադրած ենթահողում աւելի շատ հնչում են անարդար, անիրաւացի իմաստով, որ համազօր է «Ընդդէմ Ֆալաքին» բանքի «ծուռ դատաւոր»ին:

Յաջորդ տողերում բանաստեղծն իր զարմանքն ու հիացումն է յայտնում, թէ ինչպէս են մարդկային մէկ ամոլից («մէկ Ադամ եւ Եւայէ») ծնուել այդքան ազգեր ու լեզուներ: Այդ զարմանքի ու հիացման մէջ թերեւս կայ նաեւ որոշ տարակոյս եւ հաստատապէս՝ նաեւ դժգոհութիւն, քանի որ տարբեր լեզուներով խօսող ազգերը «մէկ մէկի ոչ հաւանի»:

«Որք Որ Լսեն Այս Ողբերոյս» գանգատական բանքում Ֆրիկը, մեղմ ասած, դժգոհել է, որ անգամ նոյն կրօնը դաւանող ազգերը հակամարտում են միմեանց դէմ¹³: «Գանգատ»ում եւս բանաստեղծը յիշատակում է բազմաթիւ ազգերի, որոնք ոչ միայն տարբեր լեզուներով են խօսում, այլեւ տարբեր կրօնների հետեւորդներ են եւ մէկը միւսից աւելի է կարեւորում իրեն: Այստեղից էլ բխում են ազգամիջեան արինալի ընդհարումները...

Աստծոյ դէմ Ֆրիկի ուղղած առաջին գանգատն, ուրեմն, վերաբերում է Տիրոջ ստեղծած ազգերի տարբերութեանը, անհաւասարութեանը, միմեանց հանդէպ նրանց անհանդուրժողութեանը:

Նշանակալից է նաեւ քննուող բանքում Աստծուն ուղղուած միւս գանգատը: Քրիստոսը խաչուեց «մէջ աշխարհի», բայց թոյլ տուեց, որ իրեն խաչողները մնան, ապրեն աշխարհում, չպատժեց նրանց: Բանաստեղծն այդ պատճառով գրեթէ ամօթանք է տալիս Արարչին.

*Այս ի՞նչ պատեհ, որ կու լինի,
Եւ դիպն ի Քո սիրտըդ չ'անկնի:*

Ֆրիկը դառնօրէն գանգատում է նաեւ, որ Աստուած անտեսում է հայութեանը, բոլոր ազգերի նախատինքը դարձնում, եւ չնայած որ հայերը սուրբ Աւագանի ծնունդ են եւ սուրբ Խաչի երկրպագուներ, սակայն

*Կամք ի ձեռքս անօրինի,
Որք կու վարեն անգին գերի,
Որքա՛ն քակեն եկեղեցի,
Քանի՛ շինեն պիղծ մըզկիթնի,
Քանի՛ կանայս առնեն այրի
Եւ որքա՛ն որք՝ քրիստոնէի:
Որքա՛ն արիւն հեղուն յերկրի,
Քանի՛ առնեն բան խոտելի,
Որքա՛ն տանջեն զմեզ յաշխարհի
Եւ կեղեքեն զկեանս մեր յայտնի:*

Մոնղոլական դաժան լծի տակ կքող հայութեան ծանրագոյն վիճակի այս խտացուած պատկերից յետոյ առաւել արդարացի է հնչում բանաստեղծի ցասկոտ բողոքն Աստծոյ դէմ.

*Եւ Դու ներես յամենայնի
'ւ անտես առնես զմեզ ի վըշտի,
Տէ՛ր, ոչ խընդրես վըրէժ յայտնի,
Ոչ ցուցանես ակն ամէնի:*

Յաջորդ միքանի տողերն արդէն հնչում են իբրեւ կշտամբանք, ինչը բանաստեղծն արտայայտել է իր պատկերաւոր լեզուով ու խոր զգացմունքով.

Գիտես՝ մարմին եմք մըսեղի.
Գէմ արձան չեմք զինչ պըղընձի,
Եղէգըն չեմք կամ խոյր վայրի,
Որ խանձ արկեալ ես կըրակի,
Քան զանդաստանս փըշաբերի
Կամ մացառաց ինչ պըրակի,
Որ բարկացար հայոց ազգի:

Դարեր շարունակ ծանրագոյն աղէտների ենթարկուած հայութեան մէջ արմատաւորուել է գրեթէ բարդոյթի հասած այն մտածողութիւնը, թէ Աստուած ինչ աղէտի էլ ենթարկում է մարդկութեանը, միշտ վնասւում են հայերը: Այս միտքը Ֆրիկն այսպէս է ձեւակերպել.

Զինչ բարկութիւն ի Քէն թափի,
Նայ ի վերայ մեր գայ կուրի:

Անամոք ցաւի ու վիատութեան անզօր ճիշեր են յաջորդող տողերը.

Արդ, եթէ չեմք ինչ պիտանի,
Եւ կամ չունիմք գործ ինչ բարի,
Կամ Քո սըրտիդ եմք աւելի,
Որ չարարաք ըստ հրամանի,
Նայ Դու ջընջէ՛ զմեզ մէկ հետի,
Որ Քո բարի սիրտըդ հանգչի:

Վերջին տողի **բարին** եւս նախորդ տողերի ենթահողում հնչում է հակառակ իմաստով, քանի որ որքան էլ բարեգութ, նաեւ անողորմ է Աստուած, հայի՛ Աստուածը:

Եւ այսպէս, ահա, մեծ աստուածասէրը վերածուել է նաեւ մեծ աստուածամարտի: Զգալով այս, ըմբոստ բանաստեղծը բռնուն պողթկումից յետոյ ընկրկել է՝ ասելով.

Թէ այս կամօք Քո կու լինի,
Ամենակալ Աստուա՛ծ բարի,
Նայ մեք տանեմք որչափ պիտի
Եւ համբերեմք ամենայնի,
Այլ որ վարումն է՝ թող կորի,
Եւ զոր կամիս՝ թող ա՛յն լինի:

Հայ ժողովրդին վերաբերող, կամ Ֆրիկի խօսքերով ասած՝ «վասն իմ ազգի» հատուածը կարող ենք համարել մի առանձին քերթուած, մի «Ողբ հայրենասիրի», որը կարող է դրուել Մովսէս Խորենացու «Ողբ»ի եւ Խաչատուր Աբովեանի *Վերքի* կողքին...

Այսքանով չի ամարտում Ֆրիկի գանգատն Աստուծոյ դէմ: Ըստ բանաստեղծի, Արարիչն անարդար է բաշխել կեանքը մարդկանց միջեւ: Այս խնդիրը նա որոշ չափով շօշափել է «Մարդոյն երբ տալեհն ու պուռն» սկսուածքով բանքում¹⁴: «Գանգատ»ում հեղինակի հարցադրումներն ու դժգոհութիւնն առաւել շեշտուած են ու սուր: Այստեղ եւս «արդար եւ իրաւ Դատաւորը» ընկալւում է ֆալաք-ճակատագրին տրուած «ծուռ դատաւոր» իմաստով.

*Եւ ա՛յս էր բան Քո հրամանի՝
Արդար՝ ի իրաւ Դատաւորի,
Որ մէկն ապրի տասըն տարի,
Մէկըն՝ հարիւր այլ աւելի.
Մէկըն ոչ ի տասն հասանի՝
Երկու-երեք ամսոց մեռնի...
Այն որ աղջիկն է՝ մեռանի,
Ատամնաթափ պառան ապրի.
Ով կեանք ուզէ՝ կեանքըն կարճի...*

Անարդար է բաշխուած ոչ միայն մարդու կեանքի տեւողութիւնը, այլեւ զաւակներ ունենալու հնարաւորութիւնը, «մէկն ունի բազում որդի, մէկըն չունի բընաւ որդի», ընդամին.

*Մէկինըն մէ՛կ որդի լինի.
Անոր անժամ նա մեռանի.
Մէկն այլ ունի շար մի որդի
Անորի ոչ մազ մի չի պակսի...*

Մարդկանց անհաւասար են բաշխուած նաեւ արտաքին, մարմնական, առողջական վիճակները: Մարդ կայ դեռեւս «ի մօրէ ցաւօք կամ անդամալոյծ է ծընած». ասել է բանաստեղծը յիշեալ «Մարդոյն երբ տալեհն ու պուռն» սկսուածքով բանքում եւ այդ խնդրի շուրջ եւս ծաւալուել է «Գանգատ»ում.

*Մէկն իւր կերպին է գովելի՝
Աղուոր տեսակ ճանաչելի...
Մէկն է կերպիւ տընազելի,*

է ախտերես եւ աղտերի...
Մէկն է խիստ սեւ, որպէս հրնդի,
Պըռկոշ, զագիր եւ գարշելի,
Մէկն է ճաղար-կապուտաչուի,
Կարճահասակ եւ փանաքի...

Անարդար են բաշխուած նաեւ ներքին, հոգեկան, բարոյական ու մտաւոր ունակութիւնները: Մէկն ունի բարի լեզու, ճարտար խօսքեր, մէկը նման է բարեգործ հրեշտակի, միւսը՝ չարագործ Յուդայի,

Մէկն է ուժով զարմանալի,
Մէկն է վախկոտ սարսափելի:

Եւ այս անհաւասարութիւնը ծնում է նորանոր անարդարութիւններ. ուժեղը ճնշում է թոյլին, սպանում է կամ գերում: Ծնունդ է առնում ընկերային անհաւասարութիւնը, որ Ֆրիկը ներկայացրել է իր հետեւեալ հանրայայտ տողերում.

Մէկն՝ ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի,
Մէկին՝ հազար ձի եւ ջորի,
Մէկին՝ ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի,
Մէկին՝ հազար դեկան ոսկի,
Մէկին՝ ոչ փող մի պըղընձի,
Մէկին՝ հազար հաւ մարգարտի,
Մէկին՝ ոչ ուլնիկ մապիկի,
Մէկին՝ հազար գառնով մաքի,
Մէկին՝ ոչ մէկ չորքութանի,
Մէկին՝ բեհեզ եւ ծիրանի,
Մէկին բըրդէ շալ մի չ'անկնի,
Մէկին՝ արլաս ու դըրմըզի,
Մէկին շապիկ մի չի հասնի...

Ընդ որում, այս աղաղակող անհաւասարութիւնը խարսխուած է մէկը միւսին գրկելու, հարստահարելու, անարդար՝ հարամ գործեր անելու վրայ.

...Մէկն ի զըրկանացն հարըստի,
Մէկն յիրայնոցն աղքատասցի:

Եւ այս ամէնի սահմանողն ինքը՝ Աստուածն է, որն անողորմ ուժեղի եւ անարդարի կողմն է: Դիմելով Տիրոջը, աստուածամարտ քանաստեղծը, դարձեալ իրեն բնորոշ պատկերաւոր լեզուով, համարձակօրէն մեղադրում է նրան.

*Իշխան դրեր ես մէկ մէկի,
Ձերթ զքանասար գայլ՝ ոչխարի,
Կամ քերծ վազան՝ նապաստակի,
Կամ քաջ առիւծ՝ ամէն հօտի:*

Անմիջապէս յետոյ, սակայն, կարծես «արդարացնելու» համար Տիրոջը, բանաստեղծն ասել է.

*Ձայս հա՛նց արեր, Տէ՛րդ ամէնի,
Որ մեծ ու փոքրըն ճանաչի,
Եւ բախտաւորն յայտնի լինի,
Եւ անբախտին սիրտըն պատռի:*

Դարձեալ առաջ է գալիս բախտի, ճակատագրի խնդիրը: Բախտ-տոկլաթն է բերում յաջողութիւնն ու անյաջողութիւնը, ընդ որում՝ անարդարօրէ՛ն, ուստի եւ «մէկին հարամըն յաջողի, մէկին հալալըն կորուսի»:

Ուշագրաւ է բանքում արտայայտուած այն միտքը, թէ մարդը եթէ անգամ «թագաւոր է ի թախտի, կամ քահանայ է ի բեմբի եւ կամ իշխան է արքունի, կամ որդի մեծ թագաւորի», սակայն եթէ չունի բախտ ու տոկլաթ եւ «շնորհ խօսից կարգի», ապա «թող հեղե՛ղն ըզնա տանի, քարէ կարկուտն ա՛յլ աւելի»:

Բանքում ներկայացուած են անբախտի եւ բախտաւորի այսպիսի հակադիր պատկերներ.

*Անբախտըն գայ ամօթալի,
Հեզ եւ հանդարտ, առաքինի,
Գայ եւ կանգնի յետին տեղի,
Անշուք, անշնորհք եւ անյարգի:
Բախտաւորն գայ ճօճկըտալի,
Գայ եւ նըստի յաւագ բարձի...*

Ընդ որում, անբախտը ճորտն է բախտաւորի. մոմի պէս վառում է նրա առջեւ, ծառայում է ինչպէս Աստծուն: Սակայն բախտաւորը

հաւան չէ նրա ծառայութեանը, կոպտում ու ստորացնում է նրան, մինչդեռ ինքը՝ բախտաւորը, ինչպէս ասուած է նաեւ «Մարդոյն երբ տալեհն ու պուռն» սկսուածքով բանքում, մեծարում է բոլորից. նոյնիսկ եթէ խեղանդամ է, նրա արատները չեն երեւում:

Բանաստեղծը միքանի տողով կերտել է հարուստի մի կերպար, որը ժլատ է եւ կեղծ բարեպաշտ. որքան էլ նեղես նրան («լուծն ի փորին թէ շուրջն անցնի»), չնչին ողորմութիւն անգամ չի տայ, բայց տօնական օրերին խաչհամբոյրի դիմաց ճոխ նուէրներ է պարգեւում քահանային:

Ասացինք, որ «Ընդդէմ Ֆալաքին» բանքում Ֆրիկը երկրում տիրող անարդարութիւնների համար մեղադրել է բախտ-ճակատագրին, որը կատարում է Աստծոյ կամքը: «Գանգատ»ում եւս ասում է. *«ամէն ի բախտէն գայ, կուտի, թէ Աստուծոյ փութալ լինի»*: Դարձեալ ու դարձեալ քննադատութեան բուն թիրախը Տէրն է, թէեւ այս անգամ եւս բանաստեղծը խօսքն աւարտելով՝ մեղայ է գալիս եւ ասում Տիրոջը, թէ *«Քո դատաստանն է յիրաւի»* եւ նեաթով՝ ըստ արժանւոյն ես տալիս ամէն մէկին: Բայց թէ որքան իրաւացի եւ արդարացի է Աստծոյ տուածը, աւելի քան ակնյայտ է դառնում բանքի ողջ շարադրանքի ընթացքում:

Ֆրիկից առաջ ընկերային նիւթն առակների մէջ արծարծել են Մխիթար Գօշն ու Վարդան Այգեկցին¹⁵ եւ բանաստեղծութեան մէջ՝ Գրիգոր Տղան¹⁶: Ինչպէս նկատել է Ասատուր Մնացականեանը, *«Ֆրիկից առաջ Գրիգոր Տղան է կասկածանքների գիրկն ընկնում ճակատագրի, Աստծոյ եւ մարդկային յարաբերութիւնների հարցում: Ո՛չ, ասում է նա, ճակատագիրը սուտ է, Աստուած է ղեկավարում ամէն ինչ: Սակայն միաժամանակ Գրիգոր Տղան մի պահ կարծես համարձակում է կասկածել նաեւ Աստծու արդարութեան մասին ունեցած իր համոզմունքի վրայ»*¹⁷: Այս երեւոյթն իրօք առկայ է Գրիգոր Տղայի մի բանքում, բայց նրա այդ տարակուսանքները բաւական վեհերոտ են, ինչը շատ բնական էր ԺԲ. դարի կաթողիկոս-բանաստեղծի պարագայում: Մինչդեռ ԺԳ. դարի աշխարհական բանաստեղծ Ֆրիկը ընկերային անարդարութեան նիւթը բանաստեղծօրէն մշակել է աննախադէպ սուր հարցադրումներով, առաւել խորութեամբ ու լայնութեամբ, մարդկութեան ու հասարակութեան մէջ եւ իր հարազատ ժողովրդի կեանքում տիրող անարդարութիւնների համար Աստծոյ նշաւակման հետ մէկտեղ:

Ինչպես գրում է Արշակ Զօպանեանը, «Գանգատ»ի մէջ «երեւան կու գայ յանդգնութիւն մը, աշխարհայեցողութեան լայնութիւն մը, բողոքական ոգիի մեծութիւն մը, զոր չեմ յիշեր տեսած ըլլալ ո եւ է հին հայ մատենագրի մէջ»¹⁸: Յաւելնք, որ նման երեւոյթ առկայ չէ նաեւ միջնադարեան որեւէ գրականութեան մէջ:

Աբեղեանի գնահատմամբ, Ֆրիկն իր գանգատական քերթուածներով, «որոնց նիւթն են ազգային ու սոցիալական խնդիրները, հանդիսանում է մեծ հայրենասիրական բանաստեղծ, ժողովրդի ցաւերով վշտահար մի երգիչ եւ լաւագոյն ազգային ապագայի ձգտման, թաթարական լծից ազատութեամբ իղծի մի քարոզիչ: Նրա գրաւորութիւնն աւելի մեծ է այնու, որ նա ազգային խնդրի հետ միաժամանակ եւ իրար հետ կապակցուած ու միակերպ ուժով, զբաղւում է նաեւ հասարակական-տնտեսական, դասակարգային եւ ընդհանուր մարդկային խնդիրներով: Եզակի ուժգնութեամբ եւ խորին աւելութեամբ աղաղակ է բարձրացնում աշխարհում իշխող ու հարստահարող կոպիտ ուժի դէմ, բուռն զայրոյթով նկարում կեղեքող պարոնին, շահագործող ուժեղին ու նրա վայրագութիւնը, հեգնութեամբ երգիծում բախտաւոր, տգէտ քահանային ու նրա պերճութիւնն ու վայելքը, եւ քնքշութեամբ արգահատում խեղճերին, թոյլերին ու կեղեքուածներին, միշտ ձգտելով մի լաւագոյնի, մի իդէալի»¹⁹:

Ֆրիկն, այսպիսով, առաջին աստուածամարտ բանաստեղծն է հայ մատենագրութեան մէջ: Իր որոշ կրօնական բանքերում նա Ադամի շուրթերով մեղադրել է Աստծուն մարդու առաջին մեղսագործութեան համար: Գանգատական բանքերում եւ յատկապէս «Գանգատ»ում, արդէն դատ բացելով Աստծոյ եւ նրա կամքը կատարող ճակատագրի դէմ՝ բանաստեղծը մեղադրում է Տիրոջը՝ աշխարհում իշխող բոլոր կարգի անիրաւութիւնների ու անհաւասարութեան համար:

Ֆրիկի աստուածամարտութեանն, անշուշտ, խթանել են որոշ գործոններ: Դրանցից մէկն այն դժբախտութիւններն ու ճակատագրական ձախորդութիւններն էին, որոնք նա կրել էր իր անձնական կեանքում եւ իր հանրային գործունէութեան մէջ: Մարդասէր ու ազգասէր բանաստեղծի ըմբոստութեան համար վճռորոշ են եղել նաեւ մարդկութեան եւ մասնաւորապէս հարազատ ժողովրդի կրած անլուր տառապանքներն ու անարդարութիւնները: Յատկանշական է, որ նրա ապրած

Ժամանակաշրջանում, եւ դեռ աւելի վաղ, հասարակութեան մէջ արդէն կասկածներ էին առաջանում Աստծոյ որոշ գործերի արդարացիութեան նկատմամբ: Այսպէս, Եղեսիայի (1144) եւ Երուսաղէմի (1187) աներումներից յետոյ ոմանք վիճարկել են, թէ արդե՞ժ իրաւացի են եղել քրիստոնեաների նկատմամբ Աստծոյ այդ դատաստանները²⁰: Այդ կասկածները գնալով աւելի խորացել էին՝ իրենց սուր դրսեւորումը գտնելով Ժողովրդի յոյզերի լաւագոյն թարգմանի՝ Ֆրիկի ստեղծագործութեան մէջ:

Ֆրիկի ըմբոստ ու յանդուգն աստուածամարտ ոգին չժառանգեցին միջնադարեան հայ միւս բանաստեղծները: Պիտի անցնէր վեց հարիւրամեակ, եւ հայ վաղամեռիկ հանճարը՝ Պետրոս Դուրեանը պիտի բացականչէր.

*Թող անէժք մ'ըլլամ՝ քու կողող խըրիմ,
Թող յորջորջեմ քեզ՝ Աստուած ոխերիմ²¹:*

Ֆրիկի աստուածամարտութիւնն աստուածամերժութիւն չէ ամէնեւին: Ուստի միանգամայն իրաւացի էր Աբեղեանը, որ քննադատում էր Ֆրիկին անաստուած համարողները, կամ ովքեր ասել են, թէ նա կասկածի տակ է առել Աստուածաշունչը²²:

Ֆրիկը, յիրաւի, ճշմարիտ քրիստոնեայ էր, ջերմեռանդ հաւատացեալ, մեծ աստուածասէր եւ աստուածերգու: Նրա ըմբոստութիւնն առաւելապէս բխել է նրա ջերմ մարդասիրութիւնից ու ազգասիրութիւնից, եւ նա Աստծոյ հետ խօսում է ինչպէս որդին՝ սիրելի, բայց անարդար հօր հետ, նպատակ ունենալով մարդկութեանն՝ ընդհանրապէս եւ իր Ժողովրդին՝ մասնաւորապէս, տեսնել երջանիկ, տեսնել չարը պատժուած եւ բարին յաղթանակած: Եւ դա նա դարձեալ ակնկալել է երկնային Տիրոջից.

*Յարուցանէ մեզ թագաւոր
սուրբ, որ առնէ զարդարութիւն,
Խընդրէ վըրէժս ի թըշնամեաց,
որ քրիստոնէայց հոր կու փորեն:*

Ըստ այսմ, ուրեմն, մեծ աստուածասէրի եւ աստուածամարտի ստեղծագործութեան, նրա տենչերի ու մտորումների կենտրոնում Արարիչ Աստծոյ կողքին յայտնուել է նաեւ մարդ արարածը՝ երբեմն հայ մարդու կերպարով:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Ֆրիկի բանքերից մեջբերումները կատարուած են մեր վերանայած բնագրերից, որոնք զետեղուած են մեր «Ֆրիկի Բանաստեղծական Ժառանգութիւնը» աշխատութեան մէջ (անտիպ): Մեզ համար հիմք է հանդիսացել հետեւեալ հրատարակութիւնը՝ Ֆրիկ, *Դիւան*, աշխատ. Տիրայր Արք., Նիւ Եորք, Հրատ. Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան Մեկգոնեան Հիմնադրամ, 1952:
- ² Վ. Բրիստով, *Հայաստանի եւ Հայ Կուլտուրայի Մասին*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., էջ 85:
- ³ Առաջին անգամ հրատարակել է Արիստակէս Տեկանցը (*Հայերգ Մեղեդիք Տաղք եւ Երգք*, Տփլիս, Տպ. Յովհաննէս Մարտիրոսեանցի, հաւաքեաց Արիստակէս Տեկանց, 1882, էջ 143-150): Այդ հրատարակութիւնը հանդիսանում է բանքի հիմնական աղբիւրը: Թերեւս Տեկանցն է իր կողմից «Բան Ի Ֆրիկ Գրքոյն» խորագրի առջեւ դրել 'Գանգատ' բառը. չնայած՝ Սարկաազ Վարդապետի վերամշակման գրչագրերից մէկն ունի «Գանգատ Առ Քրիստոս...» խորագիրը (Ֆրիկ, *Բանաստեղծութիւններ*, Երեւան, Արմֆան, 1941, էջ 247):
- ⁴ Առաջին անգամ Մաշտոցեան Մատենադարանի մի ձեռագրից հրատարակուել է 1937ին Երեւանում լոյս տեսած *Ֆրիկ ժողովածոյի* մէջ (Պետհրատ, էջ 150-156):
- ⁵ Առաջին անգամ հրատարակուել է վերոնշեալ Ֆրիկ, *Բանաստեղծութիւններ* հատորում (էջ 247-255): Վերցուած է Տիրայր Արք.ի կազմած քննական բնագրի անտիպ օրինակից (Ֆրիկ, *Դիւան*, էջ 541-550):
- ⁶ Հայկազ Ժամկոչեան, «'Գանգատ'-ի Երկու Վարիանտների Մասին», *Գրական Թերթ*, 1938, Հոկտ. 15. նաեւ՝ նոյն՝ «Պատմա-Բանասիրական Դիտողութիւններ Ֆրիկի եւ Նրա Տաղերի Մասին», *Պատմա-Բանասիրական Հանդէս*, 1958, թիւ 1, էջ 232-43:
- ⁷ Ֆրիկ, *Դիւան*, էջ 529-540. նաեւ՝ էջ 108-109:
- ⁸ Ֆրիկ, *Բանաստեղծութիւններ*, էջ 232-239:
- ⁹ Նոյն, էջ 240-255:
- ¹⁰ Ժամկոչեան, «Պատմա-Բանասիրական Դիտողութիւններ», էջ 215. նաեւ՝ Մանուկ Աբեղեան, *Երկեր, Հոր. Դ.* Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1970, էջ 461-462:
- ¹¹ Գրիգոր Նարեկացի, *Մարեան Ողբերգութեան*, աշխատ.՝ Պօղոս Խաչատրեան եւ Արշալոյս Ղազինեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 247:
- ¹² Աբեղեան, էջ 320-321:
- ¹³ Ֆրիկ, *Դիւան*, էջ 274:
- ¹⁴ Նոյն, էջ 383-390:
- ¹⁵ Այս կապակցութեամբ տե՛ս՝ Աբեղեան, *Երկեր*, «Սոցիալական Յարաբերութիւններն Առակների Մէջ», էջ 201-228՝:
- ¹⁶ Գրիգոր Տղայ, *Բանաստեղծութիւններ եւ Պոէմներ*, աշխատ. Ա. Մնացականեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1972, էջ 172:
- ¹⁷ Նոյն, էջ 110:
- ¹⁸ Արշակ Զօպանեան, «Կայծ Մը. Աստուածաշունչ-Ֆրիկ Զուգադրութիւն», *Անահիպ*, 1905, Է. տարի, էջ 6:
- ¹⁹ Աբեղեան, էջ 319:

²⁰ Տե՛ս՝ Ներսէս Շնորհալի, *Ողբ Եղեսիոյ*, աշխատ.՝ Մանիկ Մկրտչեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1973, էջ 102. նաեւ՝ Գրիգոր Տղայ, *Բանաստեղծութիւններ եւ Պոէմներ*, էջ 300:

²¹ Պետրոս Դուրեան, *Երկերի Ժողովածու, Հտր. 1*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1971, էջ 61:

²² Արեղեան, էջ 315, 319, 340:

THE “COMPLAINT” POEM BY FRIK
(Summary)

HENRIK BAKHCHINYAN
helinemuradyan@rambler.ru

In the 13th century, due to the rapid expansion of secular life, a new era started in Armenian poetry. Anthropocentric ideology was combined with the ever-absolutely-ruling Godcentrism, which to some extent had already started to emerge in the works of Grigor Narekatsi.

This new phase of Medieval Armenian poetry was started by Hovhannes Pluz Yernkatsi, immediately followed by Frik. The latter, a very godly person and a glorifier of God, even dared to rebel against God, thus becoming the first theomachist poet in Armenian and perhaps in world literature.

Frik’s rebellious spirit is expressed mainly in his complaint poems, where he castigated the injustice ruling in the world. Especially in his famous “Against Fate” poem, Frik whips world-possessing Fate for this injustice and calls him a “crooked judge.” In the same poem Frik indirectly blames God as he is the conductor of Fate.

Frik’s theomachist spirit is more deeply and sharply expressed in his famous masterpiece “Complaint.” The poet addresses his words not to Fate, but directly to God, the supreme judge.

Frik’s first complaint directed against God exposes the differences between nations, inequality, and their intolerance towards each other. The poet also complains that Christ left unpunished the executioners who crucified him. He was especially angry and disapproving that God ignored the Armenians, though they were Christians.

Frik also complains that the Creator has unjustly distributed life to men. The length of human life, the possibility of having children, external physical and health conditions, internal mental, moral and intellectual abilities are distributed unfairly. These inequalities generate social inequality, which Frik presented in an unprecedented manner, considering God, who stands on the side of the cruelly strong and unjust, as the defining figure of inequality.

Frik’s theomachy, however, is not atheism at all. He was a devout believer in God and a glorifier of God. His rebellion, rather, stemmed from his kindness and warm patriotism. Therefore, at the center of the creativity of the very godly and theomachist, in his ambitions and thoughts the human being also appeared beside God the Creator, sometimes in the image of an Armenian person.